

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 63 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 74 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

**կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 9-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» N 63-Ա կարգադրության մեջ կատարել լրացում՝ կարգադրության 1-ին կետում „«Գեղամասարի ԱԱՊԿ»», բառերից հետո ավելացնել «Կարմիրգյուղի ԲԱ» և «Արծվանիստի ԱԱՊԿ» բառերը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 63-Ա կարգադրության մեջ լրացում կատարելու մասին» N 74-Ա կարգադրությունը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ